ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի սեպտեմբերի 21-24-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանի Ֆրանսիայի Հանրապետություն (քաղաք Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Գայանե Գաբրիելյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**
   Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն)
   2022 թվականի սեպտեմբերի 21-24-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն–ՏՀԶԿ/OECD

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի դեպի կանաչ տնտեսություն Տարածաշրջանային վեհաժողովի չորրորդ հանդիպմանը

6.ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Համաժողովի ընթացքում քննարկվել են.

- ներկայացված Ծրագրի առաջընթացը և ձեռքբերումները,
- 2022-2023թթ երկրի և տարածաշրջանային նորացված աշխատանքային ծրագրերը,
- շրջանակաձև տնտեսության առանձնահատկությունները և երկրի կողմից կատարված առաջընթացները,
- այլ երկրների հետ համակողմանի համագործակցության հնարավոր ուղղությունները,
- Կիպրոսում կայանալիք առաջիկա նախարարական նիստում անդրսահմանային համագործակցությունը Վրաստանի հետ Դեպեդ գետի շրջանակներում,

- Ծրագրի ընթացիկ կառավարումը, հաղորդակցությունը և համակարգումն այլ համանման ծրագրերի հետ, ինչպիսիք են «EU4Environment», «Water and Data», «EU4Climate» և «EU4Energy»:

Հանդիպման երկրորդ օրը քննարկումներ են եղել շրջանաձև տնտեսության վերաբերյալ, ինչը հնարավորություն է տվել ներկայացնել Եվրոպական միությունում թեմայի շուրջ վերջին զարգացումները և վերանայել «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» Ծրագրի շրջանակներում հարակից գործունեության առաջընթացը:

Կայացել է նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» Ծրագրի վերջին աշխատանքի շնորհանդեսը արդյունաբերական թափոնների քարտեզագրման վերաբերյալ, ինչը, որպես շրջանաձև տնտեսության հիմնասյուներից մեկը, նպաստում է արդյունաբերական թափոնների վերամշակմանը:

7.ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Վերոնշյալ հանդիպմանը մասնակցել են Արևելյան գործընկեր երկրների ազգային համակարգողները, Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ պատվիրակությունների ներկայացուցիչները, ու EU4Environment իրականացնող գործընկերները (OECD, UNECE, UNEP, UNIDO և WB):

Գայանե Գաբրեիլյանը համաժողովին հանդես է եկել ելույթով, որում ներկայացվել է 2021 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի/կանաչ տնտեսության ոլորտում հիմնական ձեռքբերումները, ինչպես նաև բնապահպանական քաղաքականության և օրենսդրության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը.

- Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային պլանը և 2021-2025 թվականների գործողությունների Ծրագիրը (NAP),
- Հայաստանի Հանրապետությունում ջեռուցման համար կենսազանգվածի օգտագործման կայուն զարգացման ռազմավարությունը և ճանապարհային քարտեզը, որին կհաջորդի ռազմավարության վերջնականացումը և Գործողությունների Ծրագրի մշակումը, որպես կենսազանգվածի զանգվածային օգտագործման՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր առաջին քայլը,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (հավանության է արժանացել Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի №1122-Ա որոշմամբ),

- «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում» փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթ (2022թ. սեպտեմբերի 14-ին քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի ընթացքում և ստացել դրական դիրքորոշում՝ որոշ խմբագրական շտկումների պայմանով, նախագծի փաթեթի վերջնական լրամշակված տարբերակը նախապատրաստվում է ներկայացնել վարչապետի աշխատակազմ՝ Կառավարության նիստին քննարկելու նպատակով):

Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» Ծրագրի շրջանակներում իրականացված գործողություններին, դրանց արդյունավետությանը և ներդաշնակեցմանը Կառավարության Ծրագրի և սահմանված առաջնահերթությունների հետ:

Նախանշվել են առաջնահերթ այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն Ծրագրի մնացած ժամանակահատվածի համար:

Մասնավորապես Կանաչ տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականության համատեքստում կանաչ աճի չափորոշիչների մշակումը, արտադրողի ընդլայնված պարտակավորության հայեցակարգի ներդրումը, կայուն կանաչ հանրային գնումների խրախուսումը, աջակցություն բնական ռեսուրսների, անտառների և պահպանվող տարածքների կայուն կառավարմանը, ինչպես նաև ռեսուրս արդյունավետ արտադրության կազմակերպմանը:

Գայանե Գաբրիելյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ սեպտեմբերի 13-ի կեսգիշերին Ադրբեջանի կողմից հրետանու և մարտական անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության արևելյան և հարավարևելյան շրջանների ուղղությամբ իրականացված լայնածավալ հարձակման վերաբերյալ:

Մասնակիցներին տեղեկացվել է, որ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի հետևանով առաջացած հրդեհները մեծ վնաս են հասցրել Վայոց ձորի մարզի «Ջերմուկ» անտառային տնտեսությանը՝ զգալի վնաս հասցնելով 10 հա անտառածածկ տարածքի կենսաբազմազանությանը, ներառյալ էնդեմիկ բուսական և կենդանական աշխարհը՝ հանգեցնելով հողերի դեգրադացմանը: Այս տարածքներում աճող բույսերը (գիհի կազակական, տանձի մի քանի տեսակներ և այլն) և ապրող կենդանիներ (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ և այլն) գրանցված են Կարմիր գրքում:

Մասնավորապես Կանաչ տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքականության համատեքստում կանաչ աճի չափորոշիչների մշակումը, արտադրողի ընդլայնված պարտակավորության հայեցակարգի ներդրումը, կայուն կանաչ հանրային գնումների խրախուսումը, աջակցություն բնական ռեսուրսների, անտառների և պահպանվող տարածքների կայուն կառավարմանը, ինչպես նաև ռեսուրս արդյունավետ արտադրության կազմակերպմանը:

Գայանե Գաբրիելյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ սեպտեմբերի 13-ի կեսգիշերին Ադրբեջանի կողմից հրետանու և մարտական անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության արևելյան և հարավարևելյան շրջանների ուղղությամբ իրականացված լայնածավալ հարձակման վերաբերյալ:

Մասնակիցներին տեղեկացվել է, որ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի հետևանով առաջացած հրդեհները մեծ վնաս են հասցրել Վայոց ձորի մարզի «Ջերմուկ» անտառային տնտեսությանը՝ զգալի վնաս հասցնելով 10 հա անտառածածկ տարածքի կենսաբազմազանությանը, ներառյալ էնդեմիկ բուսական և կենդանական աշխարհը՝ հանգեցնելով հողերի դեգրադացմանը: Այս տարածքներում աճող բույսերը (գիհի կազակական, տանձի մի քանի տեսակներ և այլն) և ապրող կենդանիներ (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ և այլն) գրանցված են Կարմիր գրքում:

8.ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն հարաբերությունների խորացմանը՝ նպաստող քայլերի իրականացման վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» Ծրագրի նպատակն է օգնել վեց գործընկեր երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և ամրապնդել մարդու շրջակա միջավայրի բարեկեցությունը՝ բնապահպանական միջոցառումների աջակցության, «կանաչ աճի»հնարավորությունների ստեղծման և ցուցադրման, բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարման մեխանիզմների սահմանման միջոցով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Գայանե Գաբրիելյան
27.09.2022թ.